Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) <<Հանրակրթության մասին>> օրենքի 12րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

1. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի մայիսի 31-ից մինչև հունիսի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հուլիսի 4-ին՝ ժամը 15:00-ին, «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արմավիրի մարզ, գ. Մրգաստան, 1-ին փ. 15 շենք:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 093-55-56-21

Էլ. փոստ՝ mrgastan@mail.ru:

ՔԱՂՎԱԾՔ

«Ծիածանի միջնակարգ դպրոց» և « Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի 2022թ. մայիսի 27-ի նիստի № 7 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022թ մայիսի 27-ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 14 /տասնչորս/ անդամներից 12 /տասներկուսը/:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին
/զեկ. խորհրդի նախագահ՝ Ն.Պետրոսյան/

ԼՍԵՑԻՆ՝

Ն.Պետրոսյանը ներկայացրեց, որ «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար հայտարարել մրցույթ:
2. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել www.azdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Մրցույթն անցկացնել հայտերի ընդունման վերջին օրվանից հետո՝ 10-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00:
4. Խորհրդի որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:
5. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդների հայտերն ընդունել «Մրգաստանի Կ.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում և սույն գործընթացը վերապահել խորհրդի անդամ Նաիրա Պետրոսյանին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՆՎԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ